



YOUth
Empowerment



«ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎՈՂ
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԱՐԿԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱԶԱՅՆ
ՀԱՏԿԱՑՎԱԾ (ՀԱՏԿԱՑՎԵԼԻՔ) ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐԻ
ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԱԶԴԱԿԻՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ
ԿՈՂՄԻՑ 2016-2018 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ
ԵՎ 2019 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ
ԱՌԱՎԵԼ ՀԱԶՈՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Սույն ուսումնասիրությունը իրականացվել է «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական
հասարակության զարգացման ՀԿ-ի «Youth Empowement» ծրագրի
շրջանակներում:

Ծրագիրն իրականացվում է NESEHNUYI - Անկախ սոցիալ-էկոլոգիական
շարժման աջակցությամբ:

Ուսումնասիրությունն իրականացրեց շրջակա միջավայրի պահպանության
տնտեսական մեխանիզմների մասնագետ Արթուր Ղավալյանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 4

ԱՌԱՎԵԼ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ՀԱԶՈՂՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ
(ՄԻԶՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ) ՀԱՄԱՌՈՏ
ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 7

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔ7

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔ9

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔ12

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ13

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱԶԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔ15

ԱՄՓՈՓ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ19

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԵՎ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ
ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԸ21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, ընկերությունների կողմից վճարվող, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված արտանետման անշարժ աղբյուրներից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման, ջրային ռեսուրս վնասակար նյութերի և միացությունների արտահոսքի, ինչպես նաև ընդերքօգտագործման, արտադրության և (կամ) սպառման թափոնների հատուկ հատկացված տեղերում տեղադրման և (կամ) պահման համար բնապահպանական հարկի գումարներից մասհանումներ են կատարվում այն համայնքների բյուջեներ, որոնց վարչական տարածքում նշված ընկերությունների գործունեությունը թողնում է

վնասակար ազդեցություն: Բնապահպանական հարկից համայնքների վարչական և ֆոնդային բյուջեներ մուտքագրվող մասհանումները հանդիսանում են նպատակային միջոցներ և օգտագործվում են տվյալ համայնքների տարածքում բացառապես բնապահպանական ծրագրերի իրականացման համար: Ծրագրի նախագիծը մշակվում և հրապարակվում է համայնքի ղեկավարի կողմից: Ծրագիրը կարող է ներառել համայնքի վարչական սահմաններում գտնվող հողային, ջրային և օդային տարածքներում ընկերությունների գործունեությամբ պայմանավորված բնապահպանական հիմնախնդիրների լուծմանը և շրջակա միջավայրի պահպանությանն ու համայնքի բնակչության առողջության պահպանմանը նպատակաուղղված միջոցառումներ:

ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն բնապահպանական ծրագրերի իրականացման համար տրամադրվող սուբվենցիաներից օգտվելու հնարավորությունից ունեն Երևան քաղաքը և Հայաստանի Հանրապետության 7 մարզերի 16 համայնքներ (այդ թվում՝ խոշորացված), որոնք ներկայացված են աղյուսակ 1-ում:

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքը գործում է 2002 թվականի հունվարի 1-ից: Համայնքների կողմից իրականացված ծրագրերում հանդիպում են միջոցառումներ, որոնց ենթադրվող դրական ազդեցությունը մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա կրել է խիստ կարճաժամկետ բնույթ,

ծրագրերի իրականացման արդյունքում փորձել են լուծել հարցեր, որոնց առաջացման պատճառները պայմանավորված չեն բնապահպանական հիմնախնդիրներով: Նման ծախսերը հիմնականում ունեցել են ընթացիկ բնույթ: Այդօրինակ ծրագրերը, անգամ նպատակային լինելով, չէին կարող արդյունավետ կերպով ազդել ընկերությունների վնասակար գործունեության հետևանքների մեղմման կամ վերացման վրա:

Խոցելի է նաև համայնքների ակտիվության աստիճանը: Որոշ համայնքներ, անգամ բավարար գումարների առկայության դեպքում, չեն մշակում և ներկայացնում ծրագրեր, կամ ծրագրերը ներկայացնում են Հայաստանի Հանրապետության բյուջետային գործընթացն սկսելու մասին վարչապետի որոշումներով հաստատվող ժամանակացույցից զգալի շեղումներով: Վերջինիս հետևանքով ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ծախսերը չեն ներառվում հաջորդ

տարվա պետական բյուջեում, հետևաբար, անհնար է դառնում ծրագրի իրականացումը հաջորդ տարում:

Վերջին տարիներին պարբերաբար իրականացվող խորհրդատվական աշխատանքների արդյունքում նկատելի է լուրջ առաջնթաց այդ ոլորտում: Աստիճանաբար աճում է օրենքի համաձայն սուբվենցիաներ ստացող համայնքների թիվը, ինչպես նաև իրականացվող ծրագրերի նպատակայնության աստիճանը, կրճատվում են կարճաժամկետ ազդեցություն ունեցող միջոցառումների քանակային և ֆինանսական ցուցանիշները: Նշված ցուցանիշներն էլ ավելի բարելավելու արդյունավետ միջոց է իրականացված (կամ նախատեսված) բնապահպանական ծրագրերի հրապարակայնության ապահովումը, ինչպես նաև էկոլոգիական արդյունավետության առումով առավել հաջողված ծրագրերի ու դրանցում ներառված միջոցառումների առանձնացումը:

2016 թվականից մինչ օրս իրականացված (իրականացվող), ինչպես նաև 2019 թվականի համար նախատեսված ծրագրերից առավել հաջողվածներն առանձնացնելու համար առաջնորդվել ենք հետևյալ չափորոշիչներով.

- ծրագրերի կամ միջոցառումների՝ մարդկանց առողջության և շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության մեղմման երկարաժամկետ բնույթը,
- հետագա ծրագրերի իրականացման համար նախապայմանների ապահովումը,
- գլոբալ հիմնախնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների առկայությունը,
- կապիտալ ծախսերի գերակայությունը:

աղյուսակ 1

Հ/Հ	ՄԱՐԶԸ	ՀԱՄԱՅՆՔԸ
1	Երևան	Երևան
2	Լոռի	Ալավերդի
3	Լոռի	Ախթալա
4	Լոռի	Օձուն
5	Լոռի	Շնող
6	Սյունիք	Քաջարան
7	Սյունիք	Կապան
8	Սյունիք	Մեղրի
9	Արարատ	Արարատ
10	Կոտայք	Հրազդան
11	Կոտայք	Չարենցավան
12	Կոտայք	Ծաղկաձոր
13	Արմավիր	Մեծամոր
14	Գեղարքունիք	Գեղամասար
15	Տավուշ	Այրում
16	Տավուշ	Նոյեմբերյան
17	Տավուշ	Կողբ

*ԱՌԱՎԵԼ ԵՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ՀԱԶՈՂՎԱԾ
ԾՐԱԳՐԵՐԻ (ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ) ՀԱՄԱՌՈՏ
ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ*

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔ

Արարատի մարզի Արարատ համայնքը (մակերեսը 27.69 քկմ, բնակչությունը 19.573 մարդ), որպես ազդակիր համայնք, մասհանումներ է ստանում «Արարատցեմենտ» ՓԲ և «Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊ ընկերությունների կողմից վճարված բնապահպանական հարկերից: Վնասակար ազդեցության հիմնական բաժինը կազմում է «Արարատցեմենտ» ՓԲ ընկերության կողմից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետումը: Համայնքը և նրա շրջակայքը հարուստ չէ կանաչ գոտիներով (բացառությամբ

պտղատու այգիների), որոնք կկատարեին փոշու
ու ածխաթթու գազի կլանման և թթվածնի
արտադրության գործառույթը: Արարատ քաղաքի
կանաչապատ տարածքներում բացակայում է
ոռոգման ցանցը, որի պատճառով այդ
տարածքները ոռոգվում են ջրատար մեքենայի
միջոցով՝ ինչն արդյունավետ չէ: Համայնքի
բնակիչների կողմից խմելու ջուրն օգտագործվում
է տնամերձ հողամասերի ոռոգման համար, որը
չի բխում ջրային ռեսուրսների պահպանման և
արդյունավետ օգտագործման սկզբունքներից:
Ոռոգման ցանցի առկայությունը էականորեն
կնպաստի կանաչ տարածքների պահպանմանը և
ավելացմանը, ինչպես նաև խմելու ջրի
խնայողությանը:



Վերը նշվածը հաշվի առնելով՝ Արարատ համայնքի ղեկավարի կողմից 2015 թվականին ներկայացվել էր ծրագիր, որով նախատեսվում էր հաջորդ տարի իրականացնել արտեզյան խորքային հորի նորոգման և գործարկման ու նորոգման ցանցի մասնակի կառուցման աշխատանքներ: Եղանակային պայմանների պատճառով հնարավոր եղավ իրականացնել միայն հորի նորոգման աշխատանքներ 3.691.500 դրամի չափով: Սակայն, հաշվի առնելով խնդրի

հրատապությունը, 2018 թվականին հասանելիք ողջ գումարն ուղղվեց ոռոգման ցանցի կառուցմանը: Արդյունքում՝ 6.210.300 դրամ հատկացված գումարով նախատեսվում է մինչև 2018 թվականի ավարտը կառուցել մոտ 900 գմ ընդհանուր երկարությամբ ոռոգման ցանց: Բավարար չհամարելով ձեռքբերումը, համայնքի կողմից ներկայացվել և հավանության է արժանացել 2019 թվականին ևս 613 գմ ոռոգման ցանցի կառուցման ծրագիրը, որի համար (նախնական հաշվարկներով) կպահանջվի 3.177.700 դրամ: Աշխատանքների իրականացման համար անցկացվելիք մրցույթում ավելի ցածր գումարի առաջարկ լինելու դեպքում տնտեսված գումարը ևս կուղղվի ցանցի մեծացմանը: Մոտ 13.000.000 դրամի արդյունավետ և նպատակային օգտագործման շնորհիվ հետագայում հնարավոր կլինի խուսափել մարդկանց առողջության ու

շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության հետևանքներից և հաջորդ տարիների համար հասանելիք գումարներն ուղղել այլ հիմնարար ծրագրերի մշակմանն ու իրականացմանը:

Նման համալիր մոտեցմամբ՝ 3-5 տարվա սուբվենցիայի գումարների արդյունավետ օգտագործման արդյունքում առաջիկա տասնյակ տարիների համար ապահովված կլինեն քաղաքի կանաչ տարածքների պահպանմանն ու ավելացման նախադրյալները, ինչն էլ երկարաժամկետ կտրվածքով էապես կնպաստի մթնոլորտային օդի աղտոտման նվազեցմանն ու մարդկանց առողջության վրա դրա վնասակար հետևանքների մեղմմանը:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔ

Ալավերդի համայնքը 2017 թվականի հունիսի 9-ից ընդգրկում է նաև Հաղպատ և Աքորի ազդակիր բնակավայրերը: Համայնքի մակերեսը 47.99 քկմ է, բնակչության թիվը, ըստ ազգային վիճակագրական ծառայության կողմից 2011 թվականին անցկացված մարդահամարի տվյալների, 20.180 է, 2017 թվականին համայնքում հաշվառված է եղել 20.052 մարդ, որից փաստացի բնակիչների թիվը՝ 13.863:

Ալավերդի համայնք, որպես ազդակիր համայնք՝ մասհանումներ է ստանում «Արմենիան Քափրը Փրոզրամ» ՓԲ ընկերության կողմից արտանետման անշարժ աղբյուրներից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման, ջրային ռեսուրս վնասակար նյութերի և (կամ) միացությունների

արտահոսքերի և ընդերքօգտագործման թափոնների տեղադրման կամ պահման համար վճարվող բնապահպանական հարկերից: Հետևաբար, այս համայնքում ևս, վնասակար ազդեցություն են կրողներ են մթնոլորտային օդը, ջրային ռեսուրսները և հողային ռեսուրսները: Հաշվի առնելով համայնքի վարչական տարածքում մթնոլորտային օդի աղտոտման և վնասակար ազդեցության բարձր աստիճանը՝ համայնքում պարբերաբար իրականացվում են բնակչության առողջության պահպանմանն ու վերականգնմանն ուղղված միջոցառումներ: Մասնավորապես՝ առողջության ամրապնդման նպատակով համայնքի երեխաներին ամառային ճամբարների տրամադրման նպատակով 2017 թվականին հատկացվել է 2.970.000 դրամ, 2018 թվականին՝ 8.000.000 դրամ, 2019 թվականին նախատեսվում է հատկացնել 5.112.500 դրամ:

Ընդհանուր առմամբ, ամառային ճամփարներում հանգստանալու և առողջությունը վերականգնելու հնարավորությունից 3 տարվա ընթացքում կօգտվի 276 երեխա: Ուշադրությունից դուրս չի մնում նաև չափահաս բնակիչների առողջության վերականգնման խնդիրը: 2018 թվականին առողջության ամրապնդման նպատակով առողջարանների ուղեգրերի տրամադրման համար ծախսվել է 10.000.000 դրամ, իսկ 2019 թվականին նախատեսվում է հատկացնել 9.984.000 դրամ: Առողջության վերականգնման հնարավորությունից կօգտվի 105 քաղաքացի:



Իրականացվում են նաև կանխարգելիչ և համալիր բնույթ կրող բնապահպանական միջոցառումներ: 2017 և 2018 թվականներին իրականացվել են մոտ 19.000.000 դրամի կանաչապատ տարածքների վերականգնման և ընդլայնման, պուրակի կառուցման և կահավորման աշխատանքներ: 2019 թվականին նախատեսվում է իրականացնել 3.824.300 դրամի

կանաչապատման աշխատանքներ համայնքի Ալավերդի, Հաղպատ և Աքորի բնակավայրերում:

Կատարվում են աշխատանքներ նաև էներգաարդյունավետության բարձրացման ուղղությամբ: 2018 թվականին էներգախնայող լուսատուների ձեռքբերման և տեղադրման նպատակով ծախսվել է 10.486.200 դրամ: 120 հատ լուսատու փոխարինվել է նորով, տեղադրվել է ևս 20 լուսասյուն՝ լուսատուներով: Բնական պաշարները խնայելու և ածխաթթու գազի արտանետումները նվազեցնելու նպատակով կիրառվում են այլընտրանքային էներեգետիկայի աղբյուր հանդիսացող արևային ֆոտովոլտայիկ կայաններ: Ալավերդի համայնքի Զորավար Անդրանիկ 8/1 հասցեում գտնվող Ալավերդու համայնքապետարանի և Սանահին Սարահարթ թաղամասում գտնվող մշակույթի պալատի շենքերի տանիքներին 2018 թվականի վերջին

տեղադրված կլինեն համապատասխանաբար 10.24կՎտ և 20.16կՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտայիկ կայաններ:

Էներգաարդյունավետության բարձրացման ուղղությամբ կատարվող աշխատանքները կշարունակվեն նաև 2019 թվականին: 9.800.000 դրամից ավել գումար նախատեսվում է հատկացնել համայնքի Ալավերդի, Հաղպատ և Աքորի բնակավայրերում էներգախնայող լուսատուների ձեռքբերման և տեղադրման նպատակով:

Համայնքում իրականացվող բնապահպանական ծրագրերի իրականացման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է մեծացնել կանխարգելիչ նշանակություն ունեցող համալիր միջոցառումներին հատկացվող ֆինանսական միջոցների տեսակարար կշիռը՝ ծրագրի ամբողջ

արժեքի մեջ: Հաշվի առնելով համայնքում անտառների սակավությունը (համայնքի անտառային ֆոնդի հողերը կազմում են 2.86 հա), համայնքի վարչական տարածքում մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա մթնոլորտային օդի աղտոտման խիստ վնասակար ազդեցությունը մեղմելու համար անհրաժեշտ է էականորեն ավելացնել կանաչ գոտիների մակերեսը, հատուկ ուշատրություն դարձնելով նոր ստեղծվող կամ վերականգնվող կանաչ գոտիների կազմին՝ նպաստելով միկրոկլիմայի բարելավմանը (բնակավայրերում քամու արագության նվազեցում, փոշու և աերոզոլների ներթափանցում, օդի խոնավության վերականգնում, հողի էրոզիայի կանխում):

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔ

Օձուն համայնքը 2017 թվականի հունիսի 9-ից ընդգրկում է նաև Հագվի ազդակիր բնակավայրը: Համայնքի մակերեսը 201.8 քկմ է, բնակչության թիվը՝ 7968 մարդ: Որպես ազդակիր համայնք՝ մասհանումներ է ստանում «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲ ընկերության կողմից արտանետման անշարժ աղբյուրներից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման համար վճարվող բնապահպանական հարկից:



Իրականցվող ծրագրերում պարբերաբար ներառվում են էներգաարդյունավետության բարձրացման միջոցառումներ: 2017 թվականին համայնքի 7-րդ, 8-րդ և 13-րդ փողոցների էներգաարդյունավետության բարձրացման համար էներգախնայող լուսատուների ձեռքբերման և տեղադրման նպատակով ծախսվել է 13.273.000 դրամ, փոխարինվել է 71 հատ լուսատու: 2018 թվականին, գումարների բացակայության պատճառով, ծրագիրը չի շարունակվել, սակայն 2019 թվականին նախատեսվում է համայնքի Օձուն և Հազվի ազդակիր բնակավայրերում կառուցել լուսավորության էներգախնայող համակարգ: Ծրագրի իրականացման արդյունքում համայնքի Օձուն և Հազվի բնակավայրերի 15 փողոցներում կտեղադրվի 147 էներգախնայող լուսատու: Միջոցառման իրականացումը կնպաստի ոչ

միայն CO₂ գազի մթնոլորտային օդ արտանետումների կրճատմանը, այլև համայնքի կենսամակարդակի բարձրացմանն ու համայնքի գյուղերում էկոտուրիզմի զարգացմանը: Միջոցառման իրականացման համար նախատեսված է 22.076.800 դրամ: Աշխատանքների իրականացման արդյունքում տնտեսման դեպքում կավելացվեն ծրագրի իրականացման ծավալները:

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Չարենցավանը (մակերեսը 245.3 քկմ, բնակչությունը 39.335 մարդ), որպես ազդակիր համայնք, մասհանումներ է ստանում «Չուլակենտրոն» և «Ասկե-Գրուպ» ԲԲ ընկերությունների կողմից վճարված բնապահպանական հարկերից: Ընկերությունները

վճարում են բնապահպանական հարկ արտանետման անշարժ աղբյուրներից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման համար, հետևաբար իրականացվող բնապահպանական ծրագրերը հիմնականում ուղղված են մթնոլորտային օդի վիճակի բարելավմանը:

Չարենցավան քաղաքը հիմնադրվել է որպես ԽՍՀՄ ծանր արդյունաբերության կենտրոն: Քաղաքի բնակելի և արդյունաբերական հատվածների միջև առկա է կանաչ գոտի, որը, սակայն 90-ականների վառելիքաէներգետիկ ճգնաժամի հետևանքով լուրջ կորուստներ է կրել: Համայնքի կողմից, կանաչ գոտու վերականգնման նպատակով, պարբերաբար իրականացվում են ծառատնկման աշխատանքներ:

Մասնավորապես, 2019 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսվում է

կանաչ գոտու վերականգնման նպատակով իրականացնել 599.300 դրամի ծառատնկման աշխատանքներ: Ծրագրի իրականացման արդյունքում կտնկվի թվով 740 կանադական բարդի:

2018 թվականին 9.439.600 դրամ ուղղվել է փողոցային լուսավորության համակարգի արդիականացմանը: Ձեռք են բերվել և տեղադրվել 200 հատ լուսադիոդային լուսատուներ՝ քաղաքի 5 փողոցներում: Ծրագրի իրականացման արդյունքում կխնայվի տարեկան 55.000 կվտ/ժ էլեկտրաէներգիա (գումարային արժեքով՝ 2.500.000 դրամ), որն էլ, իր հերթին կհանգեցնի 26 տոննա CO₂ գազի մթնոլորտային օդ պակաս արտանետման: Էլեկտրաէներգիայի տնտեսման արդյունքում խնայված միջոցները նախատեսվում է ուղղել համայնքի կանաչ տարածքների շարունակական ավելացմանը:



Փողոցային լուսատուների՝
լուսադիտողայինով փոխարինելու ծրագրի
առավելությունը ոչ միայն համայնքի համար
էլեկտրաէներգիայի և համապատասխան
վարձավճարների տնտեսման խնդիր է լուծում,
այլ նաև նպաստում է գլոբալ հիմնախնդիրների
բացասական ազդեցության մեղմացմանը:
Համապատասխան միջոցների առկայության
պարագայում՝ ծրագիրը կկրի շարունակական

բնույթ, էներգախնայող լուսատուներ կտեղադրվեն ոչ միայն Չարենցավան քաղաքի բոլոր փողոցներում, այլև Չարենցավան խոշորացված համայնքի բոլոր բնակավայրերում:

ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱԶԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Սյունիքի մարզի Քաջարան համայնքը (բնակչությունը 6.914 մարդ), որպես ազդակիր համայնք, մասհանումներ է ստանում «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության կողմից արտանետման անշարժ աղբյուրներից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման, ջրային ռեսուրս վնասակար նյութերի և (կամ) միացությունների արտահոսքերի և ընդերքօգտագործման թափոնների տեղադրման կամ պահման համար վճարվող բնապահպանական հարկերից: Հետևաբար, համայնքում վնասակար

ազդեցություն են կրողներ են մթնոլորտային օդը, ջրային ռեսուրսները և հողային ռեսուրսները: Վերոնշյալը հաշվի առնելով՝ համայնքում իրականացվող բնապահպանական ծրագրերն ու միջոցառումները պետք է կրեն համալիր բնույթ: Հակառակ դեպքում միջոցների ծախսը կլինի ոչ արդյունավետ:



Քաջարան համայնքը ևս առանձնանում է երկարաժամկետ և հիմնարար բնույթի բնապահպանական ծրագրերի նախագծմամբ ու

իրականացմամբ: Ուշադրությունից դուրս չեն մնում ոչ բնապահպանական, և ոչ էլ առողջապահական խնդիրները: Մասնավորապես, 2017 թվականի բնապահպանական ծրագրով, հատկացվելիք 8.078.900 դրամից 3.265.200 դրամ է հատկացվել քաղաքային լուսավորության արդիականացմանը: Ըստ ծրագրի՝ քաղաքի 950 գմ երկարությամբ Տերյան փողոցում առկա 58 հատ քարձր ճնշման նատրիումային լուսատուները փոխարինվել են թվով 30 հատ լուսադիոդային լուսատուներով: Արդյունքում՝

- համակարգի ընդհանուր հզորությունը նվազել է 12.25 կվտ-ով,
- տարեկան էներգասպառումը նվազել է 49Մվտ/ժ (85%-ով),
- լուսավորության միջին մակարդակը 12.3 լյուքսից հասել է 17.0-ի (նորմատիվը՝ 15.0),

- CO₂ – ի արտանետումները 24.2 տոննայից իջել են 3.75 տոննայի,
- էլեկտրաէներգիայի գծով տարեկան ծախսը նվազել է 2.122.000 դրամով:

Տրամադրվող սուբվենցիայի միջոցների հաշվին կատարվել է միայն լուսադիոդային լուսատուների ձեռքբերումը: Սյուների տեղափոխումը, նոր սյուների տեղադրումը, լուսատուների փոխարինումը, ինչպես նաև համակարգի կարգաբերումը իրականացվել է համայնքի միջոցներով:

Նմանատիպ ծրագիր համայնքում իրականացվել է նաև ՄԱԶԾ-ի կողմից 2016 թվականին: Ծրագիրը համակարգվել է բնապահպանության նախարարության կողմից: Լուսավորության համակարգի արդիականացումն իրականացվել է համայնքի Լեռնագործներ փողոցում:

2017 թվականին Քաջարան համայնքի կողմից իրականացված բնապահպանական միջոցառումներից ուշադրության է արժանի նաև օդի որակի դիտարկման ավտոմատ կայանի ստեղծման նպատակով մթնոլորտային օդում փոշու ստացիոնար անալիզատորի ձեռքբերումը, որի համար հատկացվել է մոտ 2.000.000 դրամ: Քաղաքային պայմաններում առավել վտանգավոր են մթնոլորտային օդ արտանետումները, որոնք էլ բերում են քաղաքային էկոհամակարգի մյուս բաղադրիչների աղտոտման: Միջոցառման իրականացումը հիմքեր կստեղծի մթնոլորտային օդի մոնիթորինգի պարբերաբար իրականացման, արտանետման չափաքանակների գերազանցման դեպքում արագ արձագանքման ու միջոցների կիրառման, ինչպես նաև արտանետումների վնասակար ազդեցության մեղմման

միջոցառումների մշակման և իրականացման համար:

Համայնքում շարունակական է նաև էկոլոգիական կրթություն և տեղեկատվություն միջոցառումը: 2017 թվականին միջոցառման իրականացման համար ծախսվել է 1.328.300 դրամ, 2019 թվականին նախատեսվում է ծախսել 1.160.000 դրամ՝ բնապահպանական լաբորատորիաների գործունեության ապահովման համար: Միջոցառման իրականացման համար նախատեսված գումարով ձեռք կբերվեն «Քաջարան. բնությունը և էկոլոգիան» ուսումնական առարկային համար աշխատանքային տետրեր, հեռահաղորդակցության ծառայություններ, լաբորատորիաների համակարգչային և էլեկտրոնային տեխնիկայի ծրագրային և տեխնիկական սպասարկման ծառայություններ,

սարքավորումների լրակազմ, դպրոցների էկոլոգիայի խմբակների անդամների համար կկազմակերպվեն արշավներ, էքսկուրսիաներ և դաշտային աշխատանքներ, կիրատարակվի լուսավորության էներգաարդյունավետ համակարգերի վերաբերյալ տեղեկատվական բուկլետ և «Վերականգնվող էներգիայի աղբյուրները և Քաջարանում դրանց օգտագործման հնարավորությունները» թեմայով գրքույկ:

Արդյունավետ են իրականացվում նաև առողջապահական միջոցառումները: 2017 թվականին 412.400 դրամով իրականացվել է համայնքային մանկապարտեզի բուժկետի վերազինում, իսկ 2019 թվականին նախատեսվում է Քաջարանի բժշկական կենտրոնի համար 3.200.000 դրամով ձեռք բերել սպիրոմետր և աուդիոմետր:

ԱՄՓՈՓ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Ներկայացված տեղեկատվության վերլուծությունը իրականացվում է առկա խնդիրների, բացթողումների և արդյունավետության բարձրացման հնարավոր ուղիների բացահայտման նպատակով: Հաշվի առնելով Հայաստանում շրջակա միջավայրին հասցված վնասի հաշվարկման ու փոխհատուցման մեթոդների կատարելագործման անհրաժեշտությունը և դրանից բխող՝ համայնքներին բնապահպանական ծրագրերի իրականացման նպատակով հատկացվող միջոցների ոչ լիարժեք ծավալը՝ խիստ անհրաժեշտ է էականորեն բարձրացնել առկա ֆինանսավորման հնարավորությունների օգտագործման արդյունավետության մակարդակը: Միայն երկարաժամկետ

ազդեցություն ունեցող միջոցառումների արդյունավետ իրականացման դեպքում է հնարավոր առաջիկա տարիների (տասնամյակների) համար ապահովել մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության մեղմացում՝ ընդհուպ մինչև բացառում:

Առավել արդյունավետ կարող են լինել միջոցառումները, որոնք նախատեսում են գլոբալ խնդիրների լուծմանը նպաստող, հետազայում իրականացվելիք (նախատեսվող) երկարաժամկետ ազդեցություն ենթադրող միջոցառումների համար նախապայմաններ ստեղծող, մթնոլորտային օդի, ջրի և հողի աղտոտվածության մոնիթորինգ ապահովող և նշված ռեսուրսների մաքրման (վնասազերծման) միջոցառումները:

Համայնքների կողմից բնապահպանական հարկից մասհանումների միջոցներով իրականացվող բնապահպանական ծրագրերի իրականացման արդյունավետության էական բարձրացումն ապահովում է ազդակիր համարվող համայնքների ցանկի ընդլայնումն ու հատկացվելիք գումարների նշանակալի աճը:

Վերջին տարիներին իրականացված ծրագրերում երկարաժամկետ բաղադրիչի շարունակական ավելացումը պարբերաբար իրականացվող խորհրդատվական աշխատանքների, բաց ձևաչափով քննարկումների արդյունք է: Սակայն, համայնքների կողմից բնապահպանական հարկից մասհանումների միջոցներով իրականացվող բնապահպանական ծրագրերի իրականացման ուղղությունների բարելավման գործում մեծ է նաև հասարակական

կազմակերպությունների դերը: Նման կազմակերպությունների կողմից իրականացվող բազմակողմ բաց ձևաչափով հանդիպումների ընթացքում տարբեր գերատեսչությունների և համայնքային ծառայողների միջև տեղի ունեցող հանդիպումները նպաստում են իրականացվող և նախատեսվող բնապահպանական ծրագրերի և դրանցում ներառված միջոցառումների արդյունավետ իրականացմանը: Հասարակական կազմակերպությունների ուշադրության կենտրոնում պետք լինի նաև համայնքների ակտիվության բարձրացման և համայնքային ծառայողների կարողությունների զարգացման խնդիրը: Վերը նշված հիմնախնդիրների գերակշիռ մասը պայմանավորված է համայնքային ծառայողների, ինչպես նաև համայնքի բնակչության իրազեկման մակարդակով, քաղաքացիական ակտիվության աստիճանով,

համայնքի բնակչության խնդիրների ու պահանջմունքների ուսումնասիրման և վերհանման ցածր աստիճանով:

Նշված խնդիրներին զուգահեռ՝ առկա է նաև օրենսդրական դաշտի կատարելագործման անհրաժեշտություն:

Բոլոր այս միջոցառումների համալիր իրականացման պարագայում իրատեսական է համայնքում իրականացվելիք բնապահպանական ծրագրերի բարձր նպատակայնությունը, արդյունավետությունը, հետևաբար նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա վնասակար ազդեցության առավելագույն մեղմացումը և բացառումը:

**ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԵՎ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ
ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԸ**

Հ/Հ	Իրավական ակտի անվանումը	Համարը	Ընդունման ամսաթիվը
1.	Բնապահպանական ծրագրերի մշակման (նախագծման) կարգը հաստատելու մասին	197-Ն	27.02.2014թ.
2.	ՀՀ-ում կառուցապատման նպատակով թույլտվությունների եւ այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու եվ հայաստանի հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին	596-Ն	19.03.2015թ.
3.	Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին եւ տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու եւ հայաստանի հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N1318-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին	108-Ն	08.02.2018թ.
4.	Պետական անտառների պահպանության, պաշտպանության, վերականգնման եւ անտառապատման, առանձին աշխատանքների կատարման ծախսերի նորմատիվները հաստատելու մասին	684-Ն	27.06.2013թ.
5.	Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու եւ ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N168-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին	526-Ն	04.05.2017թ.

